

Մենք հաճախ իրավացիորեն դժգոհում ենք, որ հայ մանկագրության մոլորակի երեւելի բնակիչներն արդեն տարեց են, եւ նոր անուններով համալրումը համարյա աննկատելի է վերջին տասնամյակներին ու նաեւ հանիրավի հաստատագրել ենք, որ մանուկների համար կարելի է համարձակվել գրելու միայն հասուն տարիքում, որովհետեւ, այո, «մանուկների համար գրելը չափազանց դժվար գործ է» (Չարենց), եւ հասու չէ ամեն գրողի: Իսկ ահա Նաիրա Համբարձումյանը վերջին տարիներին «համարձակվում» է երիտասարդ տարիքում գրել նաեւ երեխաների համար: Վկա առաջին` «Կանաչուկը» գրքույկը` հայերեն ու ռուսերեն, «Աղբյուր», «Կանչ», «Ծիծեռնակ» պարբերականներում տպագրված պատմվածքները եւ հենց վերջերս` տարեմուտին պետական պատվերով լույս տեսած «Կարմիր հողմաղացներ» հեքիաթների ժողովածուն: Այո, երեխաների համար գրելը թերեւս ամենադժվար փորձություններից է յուրաքանչյուր գրողի ստեղծագործական կյանքում: Մեր կարծիքով, այդ առաքելության ճշմարիտ իմաստավորմամբ է Նաիրա Համբարձումյանը եկել նաեւ «մանկության մոլորակ», իրողություն է, որ ժամանակակից հայ մանկագրությունը նրա մուտքով վստահ քայլեր է անում: «Կարմիր հողմաղացներում» տեղ գտած հեքիաթների մթնոլորտը ավանդական հեքիաթների մասին մեր պատկերացումների շրջանակում, ըստ էության չի տեղավորվում` ոչ ակունքաբանական, մասամբ էլ ժանրին բնորոշ գեղարվեստական որոշակի հնարքների օգտագործման տեսակետից: Իրականում դրանք ժամանակակից հեքիաթապատումներ են, ինչ - որ առումով մանկագրության նոր տարատեսակ, որ թեւ ծնվել է ավանդական հեքիաթի խանձարուրից, բայց նոր ժամանակների ու մանկանց նոր սերունդների հոգեբանության ու մտածողության թելադրանք է:

Ժանրատեսակի արմատավորման ճանապարհին ահա լուրջ քայլ է ներկայացնում Նաիրա Համբարձումյանն իր «Կարմիր հողմաղացներ» - ով: Նրանում ամփոփվել են այսօրվա` նորագույն մտածողությամբ ու հոգեբանության զգացողությամբ հյուսված պատումներ` իրականի եւ երեւակայականի, առօրեականի ու երազայինի, սովորականի ու հեքիաթայինի, թերեւս նաեւ ֆանտաստիկային բնորոշ առանձին հեքիաթային տարրերի` չափազանցության ու հրաշքի հետաքրքիր ներհյուսումով, առանց այդ հնարքների չարաշահման, այնպես, որ ընթերցողն ընդունի ու հավատա:

Եվ ժողովածուի ու համանուն պատմվածքի խորագիրն էլ խորհրդանշում է գրողի հավատամքը` երկնային երազանքին հասնելու տիեզերական ճանապարհը սկսվում է երկրից, եւ որ ամենից առաջ պետք է գիտելիքներ ձեռք բերել, ճանաչել շրջապատող աշխարհի, բնության, տիեզերքի ճանաչողության ոլորտները, իր իսկ էության եւ աշխարհընկալման մեջ հայտնագործել եւ իմաստավորել այն անզուսպ ձգտումը, որ քայլ - քայլ, ի վերջո, տանում է դեպի երազանքների իրականացում: Եվ հեքիաթայինը, երեւակայականը տվյալ դեպքում սոսկ միջոց է այդ ճանապարհին, որ ձգվում է «երկրայինի ակունքներից դեպի երկինք` տիեզերք»: «Արեգը եւ աստղերը» պատումի փոքրիկ հերոսը` Արեգը, հավատում է, որ «բոլոր մարդիկ երկնքում ունեն իրենց երազանքի աստղերը, դրանք միայն փնտրել է պետք, որոնել»: Այս բարի, հրաշալի «փոքրիկ իշխանը» երազում է թռչել տիեզերք «գտնել այն մոլորակը, որ բոլոր աստղերի բնակարանն է», տեսնել Արեւին եւ խնդրել, որ աշխարհի բոլոր ծագերում հավասար լուսավորի, որ «այս գիշեր Ձմեռ պապիկը մարդկանց բարի սրտեր նվիրի...»:

Ընդհանրապես, բարության, կենսասիրության, մանկության մոլորակը լույսով ու ջերմությամբ պարուրված տեսնելու զգացումներ են հորդում ժողովածուի բոլոր պատումների ու նրա հերոսների էությունից: Այդ պատումների փոքրիկ հերոսները մեծ երազողներ են. Նատալին

տարված է «հավերժությունն իրենց թելին տանող» կարմիր հողմաղացների պտույտով եւ երագում է ճամփորդել, ճանաչել մարդկանց ու աշխարհները, զգալ նրանց, ուղեկից ունենալով Արեւի խորհուրդը. «Մարդկանց ճանաչելու լավագույն միջոցը մարդկանց սիրելն է: Սիրիր նրանց, եւ մարդիկ իրենք քեզ կնվիրեն իրենց սրտերը: Երբ փոքր ես, այնքան հեշտ է թվում երագին հասնելը... Թվում է՝ ձեռքդ մեկնես, ահա՝ հեքիաթի կախարդական պարկից մի ինչ-որ բան անպայման քեզ կհասնի: Միայն մանուկները գիտեն՝ ինչ է իրենց հարկավոր, նրանք ամեն ինչի մեջ հոգի են գտնում, իսկ մեծահասակները՝ նյութը առաջին հերթին»: Տիրյալ թզուկի հետ երագում կախարդական սահնակով «Փաթիլների թագավորությունում» ճանապարհորդող Մարին արքայադուստր Չյունիկի նվերը՝ «Տիեզերքի երգը», բերում է Երկիր, որ բոլոր մարդիկ կյանքի դժվար պահերին ուղեկից ունենան նրան: Եվ ընդհանրապես՝ «Երագանքին հասնելու համար մարդ իր հոգում պետք է ԵՐԳ ունենա: Այդ երգը ծնվում է յուրաքանչյուրիս հետ եւ ուղեկցում ողջ կյանքում, պարզապես պետք է պահպանես, որպեսզի չկորցնես: Դրա համար քաջություն է պետք ու բարի սիրտ: Ես ուրախ եմ, որ դու գտար քո ԵՐԳԸ...» («Տիեզերքի երգը»): Մի շարք պատմվածքներում երագում եւ երագանքը կյանքից ածանցվող փիլիսոփայություն են դարձնում անգամ բնաշխարհի անշունչ զավակները՝ Արեւը, Օվկիանոս մայրիկն ու նրա դուստրը՝ Արփին, Լուսինը, Տերեւիկը, Անձրեւիկը, նույնիսկ Կիկի բադիկը, Բաբի փղիկը՝ «մենք պետք է մեզ սիրենք այնպիսին, ինչպիսին ստեղծել է բնությունը եւ երկմտեց՝ գուցե շտապո՞ւմ է...» («Փղիկը»): Պատումների բոլոր հերոսներն էլ իրենց երագանքն ունեն եւ, կարելի է ասել ժողովածուի գլխավոր հերոսը ինքը՝ Երագանքն է, անձնավորված մյուս հերոսների երկրային - երկնային երագներում: Գրողն իր անտեսանելի ներկայությամբ ուղղորդում է նրանց, որ երագանքի թելերով թռչելիս երբեք չկտրվես հայրենի հողից ու բնաշխարհից, որ «հավերժությունն իրենց թելերին տանող կարմիր հողմաղացների պտույտով հիանալիս» կանգ չառնեն, չընկճվեն դժվարություններից, համարձակ գնան իրենց երագանքների ետեւից եւ անպայման հաղթեն, քանի որ «թռչչքի համար ամուր թելեր են հարկավոր...»: Առկա են իմաստախոսություններ, որոնք հիմնականում ներհյուսվում են հեքիաթապատումի տրամաբանությանը՝ ճշմարիտ դասեր ավանդելով ընթերցողին: «Կարմիր հողմաղացներ» ժողովածուի «սիրտը» բաբախում է այս պատկերներով, իսկ նրա հեղինակը՝ Նաիրա Համբարձումյանը բարի հրաշքների մի աշխարհ է բացում մանկության մոլորակում: Այդ ճանապարհին, անշուշտ, շուտով կրկին կհանդիպենք երիտասարդ գրողի նոր ստեղծագործությունների հերոսներին՝ իրենց երագանքների հետ:

Լյուդվիգ Կարապետյան, բ.գ.դ.